սուրբ հաւրն լսեցի, թէ զինչ որ ի ժամատեղս կարգեալ եմ, զմիննոչ եղեալ եմ յինէն, այլ յառաջին սուրբ հարցն իմ առեալ և եղեալ ի գրի»*։

Այստեղ իսկապէս պէտք է վերջանար մեր խօսքը. բայց Թովմայի գործունէութեան արժէքը չափելու համար հետաքրքրական է լսել նորա ժամանակակիցների կարծիքները։ Դոցանից մի քանիսը տեսանք վերև, երբ նորա աշակերտների մասին էինք խօսում**։ Կարապետ գրիչը ՊՁԱ (=1432) թուին խնդրում է «յիշել ի բարին Քրիստոս զերջանիկ և զքաջ հռետորն և զտիեզերալոյս բարունին զԹովմայ». ընդարձակ է խօսում նա յատկապէս իւր գրած մի Յայսմաւուրքի յիշատակարանում, անուանելով նորան «առաջնորդ երկրիս Քաջբերունւոյ և ամենայն քրիստոնէից ազգի», «մեծ հռետոր», «քաջ քարտուղար», «ճշմարիտ քարոզող ազգիս Հայոց և պարծանք ամենայն վարդապետաց և կրօնաւորաց»***։ Ներսէս արեղան ՊՁԹ (=1440) թուին իւր յիշատակարանի մէջ Թովմային անուանում է «հոգիբնակալ» և «ածարան վարդապետ», «խարազնավարք ճգնաւոր», «որ փայլէ ի ժամկիս մերում իբրև զարեգակն պայծառ ի կամարս երկնից յերկիրս Քաջբերունւոյ»†։ Թումա գրիչը ՊԴ (1441) թուին անուանում է նորան «տիեզերալոյս վարդապետ»††։ Յովհաննէս գրիչ որդի Մանգասարի Արճիշեցին ՊՁԴ (1435) թուին խնդրում յիշել. «եւս առաւել զերիւելին ի մէջ ամի զլուսատուն ազգիս, զածարան և զսէր բարունապետն, զհեզահոգի և զքաղցր վարդապետն Թովմա. զոր Տէր Աստծ ջահ անշիջանելի պահեսցէ զնա և հաստատուն ի վերայ գաւազանի իւրոյ»†††։ Նոյն գրիչը Ճաշոցում 1457 թուին յիշում է «և զերախտաւոր ուսուցիչն իմ զսուրբ վարդապետն Թումայ մեծ բարունին»†*։ Յովհաննէս գրիչ որդի Յակոբ քահանայի ՋԸ (=1459) թուին գրած Յայսմաւուրքում յիշում է «նաև զտիեզերալոյս բարունապետն զԹումայ Մեծոփայ վանաց մեծ վարդապետն, որ բազում աշխատանօք ուսուցեալ է մեզ զարուեստ

---

* Նոր Նիւթեր. Ար. 742—743. (5—6)։

** Անդ. եր. 742 (5)։ Այս տետրակի մէջ. ԺԷ.

*** Փիրզ. Նստարք 101. 111.

† Նոր Նիւթեր. Ար. 765. (28)։

†† Նստարք. 125.

††† Աւետարան Զմիւռնիացի Սիմէոն էֆ-ի Տ. Գառնիկեանի, մեր Յիշատակարանների (անտիպ) Ժողովածուից։

†* Նստարք. 185.